

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2015 թվականի

թիվ 70

քաղ. Մինակ

«Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրով նախատեսված առանձին փաստաթղթերի հաստատման մասին

«Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 3-րդ հոդվածի 1-ին կետի եւ 6-րդ հոդվածի 2-րդ կետի իրականացման նպատակներով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը,

հսկիչ (նույնականացման) նշանի բնութագրերը, դրա զետեղման կարգը եւ հսկիչ (նույնականացման) նշաններում պարունակվող տեղեկատվության

կառուցվածքին ու ձեւաչափին ներկայացվող պահանջները,

այն տեղեկատվության կառուցվածքին եւ ձեւաչափին ներկայացվող պահանջները, որը հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստումը եւ անդամ պետությունների իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին դրանց իրացումն իրականացնող կազմակերպությունների կողմից փոխանցվում է դրանց անդամ պետությունների իրավասու մարմիններին, ինչպես նաեւ այդ տեղեկատվության փոխանցման ժամկետները,

այն տեղեկատվության կառուցվածքին եւ ձեւաչափին ներկայացվող պահանջները, որը հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում ներառված ապրանքների շրջանառությունն իրականացնող իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից փոխանցվում է դրանց անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմիններին, ինչպես նաեւ այդ տեղեկատվության փոխանցման ժամկետները:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ՝ բացառությամբ սույն Որոշման 1-ին կետի 2-րդ պարբերության:

Սույն Որոշման 1-ին կետի 2-րդ պարբերությունն ուժի մեջ է մտնում 2016 թվականի ապրիլի 1-ից, սակայն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Մազինտաւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի
նոյեմբերի 23-ի թիվ 70 որոշմամբ

ՑԱՆԿ

**հսկիչ (տույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա
ապրանքների**

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ

Ապրանքի անվանումը

ծածկագիր

4303 10 901 0	հագուստի առարկաներ՝ ջրաքիսի մորթուց
4303 10 902 0	հագուստի առարկաներ՝ ճահճակուղբի մորթուց
4303 10 903 0	հագուստի առարկաներ՝ բեւեռաղվեսի կամ աղվեսի մորթուց
4303 10 904 0	հագուստի առարկաներ՝ ճագարի կամ նապաստակի մորթուց
4303 10 905 0	հագուստի առարկաներ՝ ջրարջի մորթուց
4303 10 906 0	հագուստի առարկաներ՝ ոչխարի մորթուց
4303 10 908 0	հագուստի այլ առարկաներ*

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի
նոյեմբերի 23-ի թիվ 70 որոշմամբ

ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

**հսկիչ (նույնականացման) նշանի, դրա զետեղման կարգը եւ հսկիչ
(նույնականացման) նշաններում պարունակվող տեղեկատվության
կառուցվածքին եւ ձևաչափին ներկայացվող պահանջները**

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն փաստաթուղթը մշակվել է «Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան:

2. Սույն փաստաթղթում կիրառվող հասկացությունները գործածվում են սույն Համաձայնագրով եւ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

II. Հսկիչ (նույնականացման) նշանի բնութագրերը

3. «Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ ապրանքների դրոշմավորման համար նախատեսված հսկիչ (նույնականացման)

նշանը պետք է պարունակի ռադիոհաճախականության պիտակ (այսուհետ՝ RFID պիտակ), այն պետք է լինի խիստ հաշվետվության ձեւաթուղթ՝ պաշտպանության տարրերով (միջոցներով) (պաշտպանված պոլիգրաֆիկական արտադրանք), պետք է պատրաստվի եւ իրացվի խիստ հաշվետվության ձեւաթղթերի պաշտպանվածության մակարդակին ներկայացվող պահանջներին եւ Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) օրենսդրությանը համապատասխան՝ դրանց իրացման եւ հաշվառման կարգին համապատասխան:

4. Հսկիչ (նույնականացման) նշանն ունի հետեւյալ թույլատրելի չափսերը՝

25 մմ x 160 մմ (որպես տարբերակ՝ մինչեւ 25 մմ x 210 մմ),

53 մմ x 80 մմ (որպես տարբերակ՝ մինչեւ 53 մմ x 170 մմ):

Հսկիչ (նույնականացման) նշանի պատկերները՝ կախված չափսերից, ինչպես նաեւ այդպիսի նշաններում պարունակվող տեղեկատվության կազմը եւ ձեւաչափը ներկայացված են հավելվածում:

5. Հսկիչ (նույնականացման) նշանն ապահովվում է պաշտպանության նվազագույն պարտադիր հետեւյալ տարրերով (միջոցներով).

հատուկ պաշտպանված թուղթ (թաղանթանյութային կամ սինթետիկ)՝ պաշտպանիչ տարրերով,

պաշտպանիչ հատկանիշներ՝ վիզուալացված քողարկված պատկերների եւ (կամ) հոլոգրաֆիկ տարրերի հիմքի վրա,

պաշտպանիչ գրաֆիկական տարրեր՝ տեսանելի եւ (կամ) անտեսանելի, պաշտպանիչ ներկերով պատրաստված,

գրաֆիկական «ծուղակներով» պոզիտիվ եւ (կամ) նեգատիվ միկրոտեքստ:

Հսկիչ (նույնականացման) նշանի պաշտպանության տարրերի (միջոցների) ընտրությունը, նշված պահանջները հաշվի առնելով, սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

Անդամ պետությունների կողմից որոշվող մարմինները

(կազմակերպությունները) սահմանում են հսկիչ (նույնականացման) նշանի պաշտպանության տարրերին (միջոցներին) ներկայացվող պահանջները՝ իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան, եւ դրանց մասին տեղյակ են պահում անդամ պետությունների հսկող մարմիններին:

III. Ապրանքների վրա հսկիչ (նույնականացման) նշանի զետեղման եղանակները եւ կարգը

6. Ապրանքները հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորելիս կիրառվում են դրանք ապրանքի վրա զետեղելու հետեւյալ եղանակները եւ կարգը՝

ա) ներկարովի, երբ մանածագործական հիմքով հսկիչ (նույնականացման) նշանը մեքենայական եղանակով ներկարվում է անմիջապես արտադրատեսակի կառուցվածքային կարի մեջ՝ ամբողջապես տեսանելի թողնելով այդ նշանում պարունակվող գրաֆիկական տեղեկատվությունը: Այդ դեպքում հսկիչ (նույնականացման) նշանի զետեղումը կատարվում է ապրանքի պատրաստման ժամանակ՝ այդ նշանը ներսի կողմից (դարձերեսից) կարի մեջ ներկարելու միջոցով՝ ներկարման համար հատուկ դաշտ օգտագործելով.

բ) սոսնձային, երբ ինքնակաշուն հիմքով հսկիչ (նույնականացման) նշանը սոսնձվում է ապրանքի կառուցվածքային տարրի վրա (դրոշմավորման ներկարված մանեկապիտակ): Այդ դեպքում հսկիչ (նույնականացման) նշանի զետեղումը կատարվում է ապրանքի վրա այնպիսի դրոշմավորման մանեկապիտակի առկայության դեպքում, որը ներկարված է պատրաստողի կողմից եւ բավարար չափով ազատ դաշտ ունի՝ նշված նշանը դրա վրա առանց դեֆորմացման տեղավորելու համար: Հսկիչ (նույնականացման) նշանի զետեղումը կատարվում է այդպիսի նշանի սոսնձային շերտից պաշտպանիչ պատվածքը զատելու եւ այդ նշանը դրոշմավորման մանեկապիտակի ազատ դաշտի վրա սոսնձելու միջոցով.

գ) վրադիր (կախովի), երբ պլաստիկ հիմքով հսկիչ (նույնականացման)

նշանը մեկանգամյա օգտագործման կապարակնքող տարրի օգնությամբ անբաժանելի կերպով ամրացվում է արտադրատեսակի առաջնային մասի մերակի բացվածքի կամ մերակ-օղլակի մեջ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ներկարովի կախիչի կամ կախիչի բռնիչի ներկարովի մերակի մեջ՝ մետաղական շղթայի, մետաղից եւ այլ նյութերից թիթեղի տեսքով: Հսկիչ (նույնականացման) նշանի զետեղումը կատարվում է հսկիչ (նույնականացման) նշանի կապարակնիքի ճկուն տարրն արտադրատեսակի առաջնային մասի մերակի բացվածքի կամ մերակ-օղլակի, ներկարովի կախիչի կամ կախիչի բռնիչի ներկարովի մերակի եւ կապարակնքող տարրի փակիչ սարքվածքի մեջ այնպես անցկացնելու միջոցով, որ բացավի դրա բաժանումն առանց քանդուման:

7. Հսկիչ (նույնականացման) նշանի անջատումը դրոշմավորված ապրանքից կամ կապարակնքող տարրից պետք է խախտի հսկիչ (նույնականացման) նշանի ամբողջականությունը եւ անհնար դարձնի դրա կրկնակի զետեղումը այլ ապրանքի վրա:

IV. Հսկիչ (նույնականացման) նշանի նյութին ներկայացվող պահանջները

8. Հսկիչ (նույնականացման) նշանի նյութը պետք է ապահովի՝

նշանի եւ ապրանքի վրա դրա ամրակման ամբողջականությունը,

նշանում պարունակվող տեղեկատվության ընթեռնելիությունը՝ մինչեւ ապրանքը սպառողին իրացնելը,

կրկնակի օգտագործման փորձ կատարելիս հիմքի քանդումը,

ցրտադիմացկունությունը (-40°C եւ ավելի ցածր ջերմաստիճանի պայմաններում աշխատունակության պահպանումը):

Որպես հսկիչ (նույնականացման) նշանի հիմք կարող են օգտագործվել տեքստիլը, պլաստիկը կամ թուղթը:

V. Հսկիչ (նույնականացման) նշանի ներկառուցված RFID-պիտակին
ներկայացվող պահանջները

9. Հսկիչ (նույնականացման) նշանի պատրաստման ժամանակ պետք է օգտագործվի UHF-ընդգրկույթի՝ հետեւյալ տեխնիկական բնութագրերն ունեցող RFID-պիտակ՝

ա) աշխատանք ISO 18000-63 ստանդարտի պահանջներին համապատասխանող հաճախականությունների ընդգրկույթներում (860-960 ՄՀց՝ UHF RFID արձանագրության համար)։

բ) RFID-պիտակի չիփի այնպիսի եզակի սերիական համարի առկայությունը, որը դա արտադրողի կողմից գրանցված է չիփի հիշողության TID-տիրությունում։

գ) տվյալների փոխանցման արձանագրություն՝ EPCglobal UHF Class 1 Gen 2 / ISO/IEC 18000-63:2013 եւ նշվածի հետ համատեղելի ստանդարտի հետագա տարբերակները։

դ) հիշողության ծավալը՝ EPC՝ 128 բիթից ոչ պակաս, User՝ 32 բիթից ոչ պակաս, TID՝ 64 բիթից ոչ պակաս։

ե) պահպանման ջերմաստիճանը՝ -40°C -ից մինչեւ $+70^{\circ}\text{C}$ ։

զ) աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C -ից մինչեւ $+50^{\circ}\text{C}$ ։

է) պարբերաշրջանների ծրագրավորումը՝ գրանցման 10 000 պարբերաշրջանից ոչ պակաս։

VI. Հսկիչ (նույնականացման) նշաններում պարունակվող
տեղեկատվության կառուցվածքին եւ ձեւաչափին ներկայացվող
պահանջները

1. Տեսողականորեն ընթերցվող տեղեկատվությանը
ներկայացվող պահանջները

10. Հսկիչ (նույնականացման) նշանի վրա գետեղվում է տեսողականորեն ընթերցվող հետեւյալ տեղեկատվությունը՝ անկախ գետեղման եղանակից եւ նյութից՝

ա) ISO / IEC 29160 Information technology - Radio frequency identification for item management - RFID Emblem ստանդարտին համապատասխանող RFID-պիտակի առկայության հասկանիշը.

բ) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ապրանքային խմբի կրճատ անվանումը ռուսերենով («Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» («Արտադրատեսակներ՝ բնական մորթուց») ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագրի իրականացման ժամանակ ապրանքների դեպքում): Բլոկի չափսերը՝ 5x45 մմ.

գ) ապրանքները շրջանառության մեջ դնելն իրականացրած անդամ պետության երկնիշ ծածկագիրն՝ ըստ Աշխարհի երկրների դասակարգչի, որը հաստատված է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմամբ (Հայաստանի Հանրապետություն՝ AM, Բելառուսի Հանրապետություն՝ BY, Ղազախստանի Հանրապետություն՝ KZ, Ղրղզստանի Հանրապետություն՝ KG, Ռուսաստանի Դաշնություն՝ RU): Բլոկի չափսերը՝ 15x18 մմ.

դ) հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացման համարը (նույնականացուցիչը), որը կազմվում է սույն բաժնի 3-րդ ենթաբաժնում ներկայացված կանոններին համապատասխան.

ե) ապրանքը շրջանառության մեջ դնելու եղանակի նշումը (ապրանքների ներմուծում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք կամ ապրանքների արտադրություն անդամ պետությունների տարածքներում): Ապրանքների ներմուծումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք նշվում է հսկիչ (նույնականացման) նշանի կարմիր հիմնագույնով եւ լրացուցիչ՝ անդամ պետության ծածկագրի պարունակող դաշտում աջակողմյան

սլաքի գրաֆիկական նշանակման միջոցով: Անդամ պետությունների տարածքներում ապրանքների արտադրությունը նշվում է հսկիչ (նույնականացման) նշանի կանաչ հիմնագույնով:

2. Հսկիչ (նույնականացման) նշանի վրա տեղավորվող՝
մեքենայական եղանակով ընթերցվող տեղեկատվությանը
ներկայացվող պահանջները

11. Ի լրումն տեսողականորեն ընթերցվող տեղեկատվության՝ հսկիչ (նույնականացման) նշանը պետք է պարունակի մեքենայական եղանակով ընթերցվող հետևյալ տեղեկատվությունը՝

ա) RFID-պիտակը, որն իր մեջ ներառում է՝

հիշողության TID-տիրույթում՝ RFID-պիտակի չիփի եզակի սերիական համարը, որը գրանցվում է RFID-պիտակի չիփն արտադրողի կողմից,

հիշողության User-տիրույթում՝ հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացուցիչը կամ հսկիչ (նույնականացման) նշանը թողարկող երկրի ծածկագիրը, որը գրանցվում է հսկիչ (նույնականացման) նշանն արտադրողի կողմից,

հիշողության EPC-տիրույթում՝ առետրային միավորի սերիական գլոբալ համարը (SGTIN), որը գրանցվում է ապրանքը շրջանառության մեջ դնելն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից (ապրանքների մնացորդների դրոշմավորման ժամանակ SGTIN-ի գրանցումը RFID-պիտակի հիշողության EPC-տիրույթում պարտադիր չէ).

բ) Code-128 սիմվոլիկայով գծային սովերագծային ծածկագիր՝ կատարված սեւ-սպիտակ գույներով: Գծային սովերագծային ծածկագիրը պետք է ծածկագրված տեսքով պարունակի հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացման համարը (նույնականացուցիչը), որը կազմվում է սույն բաժնի 3-րդ ենթաբաժնում ներկայացված կանոնների համապատասխան.

գ) երկչափ ստվերագծային ծածկագիր (20x20 մմ չափսի QR-ծածկագիր), որը ծածկագրված տեսքով պարունակում է հղում դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչին (հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացման համարով՝ ազգային բաղադրիչին ուղղված URL-հարցում):

3. Հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացման համարը
(նույնականացուցիչը) կազմելու կանոնները

12. Հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացման համարը (նույնականացուցիչն) ունի հետևյալ կառուցվածքը՝ YY-XXXXXX-NNNNNNNNNN, որտեղ.

YY՝ ապրանքները շրջանառության մեջ դնելն իրականացրած անդամ պետության երկնիշ ծածկագիրը (Հայաստանի Հանրապետություն՝ AM, Բելառուսի Հանրապետություն՝ BY, Ղազախստանի Հանրապետություն՝ KZ, Ղրղզստանի Հանրապետություն՝ KG, Ռուսաստանի Դաշնություն՝ RU),

XXXXXX՝ հսկիչ (նույնականացման) նշանի տեսակը (տառաթվային 6 պայմանանշաններ, որոնք կազմվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան),


NNNNNNNNNN՝ հսկիչ (նույնականացման) նշանի սերիան եւ համարը (տառաթվային 10 պայմանանշաններ, որոնցում օգտագործվում են 0-ից 9-ը թվանշանները եւ լատինական այբուբենի մեծատառերը՝ ցանկացած համակցությամբ. կազմվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան եւ ապահովում են ապրանքային խմբի շրջանակներում ապրանքի միավորի ու այն ապրանքները շրջանառության մեջ դնելու եղանակի հաշվառման եզակիությունը, որոնց վերաբերյալ ընդունվել է հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման մասին որոշում):

ՀԱՎԵԼՎԱԾ


հսկիչ (նույնականացման) նշանի
բնութագրերի, դրա զետեղման կարգի եւ
հսկիչ նշաններում պարունակվող
տեղեկատվության կառուցվածքին ու
ձեւաչափին ներկայացվող պահանջների

ՕՐԻՆԱԿՆԵՐ

հսկիչ (նույնականացման) նշանների պատկերների



Նկար 1. Հսկիչ (նույնականացման) նշանի պատկերի օրինակը՝ Միության անդամ պետությունների տարածքներում արտադրված ապրանքների դեպքում



Նկար 2. Հսկիչ (նույնականացման) նշանի պատկերի օրինակը՝ Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների դեպքում



Նկար 3. Հսկիչ (նույնականացման) նշանի պատկերի օրինակը՝ ապրանքի վրա
 հսկիչ (նույնականացման) նշանը կախովի (վրադիր) եղանակով ամրացնելու
 դեպքում

1-ին եւ 2-րդ նկարներում օգտագործվող նշումները նշանակում են հետեւյալը՝

1՝ Եվրասիական տնտեսական միության՝ ապրանքը շրջանառության մեջ դնելն իրականացրած անդամ պետության երկնիշ ծածկագիրը. Հայաստանի Հանրապետություն՝ AM, Բելառուսի Հանրապետություն՝ BY, Ղազախստանի Հանրապետություն՝ KZ, Ղրղզստանի Հանրապետություն՝ KG, Ռուսաստանի Դաշնություն՝ RU: Չափսերը՝ 15x18 մմ.

2՝ ապրանքը շրջանառության մեջ դնելու եղանակը. ա) ապրանքի ներմուծումը Միության մաքսային տարածք գրաֆիկորեն նշվում է հսկիչ (նույնականացման) նշանի կարմիր հիմնագույնով, լրացուցիչ պատկերվում է աջակողմյան սլաք, բ) անդամ պետությունների տարածքներում ապրանքի արտադրությունը գրաֆիկորեն նշվում է հսկիչ (նույնականացման) նշանի կանաչ հիմնագույնով.

3՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ապրանքային խմբի՝ տեքստային տեսքով կրճատ անվանումը ռուսերենով («Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ

արտադրատեսակներ՝ բնական մորթուց» («ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ՝ ԲՆԱԿԱՆ ՄՈՐԹՈՒՑ») ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագրի իրականացման ժամանակ ապրանքների դեպքում): Չափսերը՝ 5 մմ x 45 մմ.

4՝ հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացման համարը (նույնականացուցիչը) եւ այդպիսի նշանի նույնականացուցիչը կրկնօրինակող գծային սովերագծային ծածկագիրը՝ Code 128 ձևաչափով: Չափսերը՝ 12 մմ x 75 մմ:

Նույնականացուցիչի կառուցվածքն ունի YY-XXXXXX-NNNNNNNNNN տեսքը: Դրա պարունակությունը, բացառությամբ անդամ պետության երկտառ ծածկագրի, սահմանվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

5՝ երկչափ սովերագծային ծածկագիր (QR-ծածկագիր), որը կրկնօրինակում է հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացուցիչը եւ պարունակում է հղում ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչի պորտալին: Չափսերը՝ 20 մմ x 20 մմ.

6՝ RFID-պիտակի առկայության հատկանիշը: Չափսերը՝ 15x15 մմ.

7՝ դաշտ արտադրատեսակի մեջ ներկարման համար (25 x 10 մմ կամ 53 x 10 մմ) (միայն ապրանքի վրա զետեղման ներկարովի եղանակի համար):

Comment [AN1]: կարծում եմ բնօրինակում սխալ է տեղի ունեցել եւ պետք է լինի <ссылку на портал национального компонента>:

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի
նոյեմբերի 23-ի թիվ 70 որոշմամբ

ՊԱՀԱՆՁՆԵՐ

**այն տեղեկատվության կառուցվածքին եւ ձեւաչափին ներկայացվող, որը
հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստումը եւ անդամ
պետությունների իրավաբանական անձանց ու անհատ
ձեռնարկատերերին դրանց իրացումն իրականացնող
կազմակերպությունների կողմից փոխանցվում է դրանց անդամ
պետությունների իրավասու մարմիններին, ինչպես նաեւ այդ
տեղեկատվության փոխանցման ժամկետները**

1. Սույն պահանջները մշակվել են «Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետին համապատասխան: Սույն պահանջներում կիրառվող հասկացությունները գործածվում են նշված Համաձայնագրով եւ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

2. Պատրաստված եւ իրացված հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկատվությունը կուտակվում է ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչում: Միության անդամ պետությունների կողմից որոշվող մարմինները (կազմակերպությունները)

(այսուհետ, համապատասխանաբար՝ անդամ պետություններ, մարմիններ (կազմակերպություններ)) ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչի տեղեկատվական ծառայությունների միջոցով անդամ պետության իրավասու (լիազորված) մարմին են ուղարկում յուրաքանչյուր հսկիչ (նույնականացման) նշանի վերաբերյալ հետեւյալ պարտադիր տեղեկատվությունը՝

ա) հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստումը եւ իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին դրանց իրացումն իրականացնող կազմակերպությունների ռեեստրում անդամ պետության մարմնի (մարմինների) (կազմակերպության (կազմակերպությունների)) գրանցման համարը (համարները).

բ) հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացման համարը (նույնականացուցիչը).

գ) հարկ վճարողի՝ հսկիչ (նույնականացման) նշանի պատվիրատու հանդիսացող կազմակերպության համարը (Հայաստանի Հանրապետության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, Բելառուսի Հանրապետության դեպքում՝ վճարողի հաշվառման համարը, Ղազախստանի Հանրապետության դեպքում՝ անհատական նույնականացման համարը եւ բիզնես-նույնականացման համարը, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության դեպքում՝ հարկ վճարողի նույնականացման համարը).

դ) ապրանքը շրջանառության մեջ դնելու եղանակը (ներմուծում Միության մաքսային տարածք կամ արտադրություն անդամ պետությունների տարածքներում).

ե) այն ապրանքի քառանիշ ծածկագիրն՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի՝ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկին համապատասխան, որի համար օգտագործվելու են հսկիչ (նույնականացման) նշանները.

զ) հսկիչ (նույնականացման) նշանի պատրաստման ամսաթիվը.

է) հսկիչ (նույնականացման) նշանը պատվիրատուին իրացնելու ամսաթիվը.

ը) հսկիչ նշանի ռադիոհաճախականության պիտակի չիփի նույնականացուցիչը (Tag Identifier, TID):

3. Սույն պահանջների 2-րդ կետում նշված տեղեկատվությունը մարմինների (կազմակերպությունների) կողմից փոխանցվում է անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին՝ հսկիչ (նույնականացման) նշանները պատրաստելուց եւ (կամ) իրացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Էլեկտրոնային տարբերակով մարմինների (կազմակերպությունների) կողմից փոխանցվող տվյալների կառուցվածքը եւ ձեւաչափը ներկայացված են նկարագրության մեջ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՎԵԼՎԱԾ

այն տեղեկատվության կառուցվածքին եւ
ձեւաչափին ներկայացվող պահանջների, որը
հսկիչ (նույնականացման) նշանների
պատրաստումը եւ անդամ պետությունների
իրավաբանական անձանց ու անհատ
ձեռնարկատերերին դրանց իրացումն
իրականացնող կազմակերպությունների կողմից
փոխանցվում է դրանց անդամ պետությունների
իրավասու մարմիններին, ինչպես նաեւ այդ
տեղեկատվության փոխանցման ժամկետները

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստումը եւ Եվրասիական
տնտեսական միության անդամ պետությունների իրավաբանական
անձանց ու անհատ ձեռնարկատերերին դրանց իրացումն
իրականացնող կազմակերպությունների կողմից դրանց անդամ
պետությունների իրավասու (լիազորված) մարմիններին փոխանցվող
տվյալների կառուցվածքի եւ ձեւաչափերի**

1. Սույն նկարագրությամբ սահմանվում են հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստումը եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ, համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին դրանց իրացումն իրականացնող կազմակերպությունների կողմից դրանց անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմիններին փոխանցվող տվյալների (այսուհետ՝ փոխանցվող տվյալներ) կառուցվածքին եւ ձեւաչափերին ներկայացվող

պահանջները:

2. Ազգային բաղադրիչ փոխանցվող տվյալների ձեւաչափը սահմանվում է ներպետական օրենսդրությամբ: Առաջարկվում է փոխանցվող տվյալները կազմել XML-ձեւաչափով՝ հետեւյալ ստանդարտներին համապատասխան՝

«Extensible Markup Language (XML) 1.0 (Fourth Edition)» (հրապարակված է «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ <http://www.w3.org/TR7REC-xml> հասցեով),

«Namespaces in XML» (հրապարակված է «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ <http://www.w3.org/TR/REC-xml-names> հասցեով),

«XML Schema Part 1: Structures» եւ «XML Schema Part 2: Datatypes» (հրապարակված են «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ <http://www.w3.org/TR/xmlschema-1/> եւ <http://www.w3.org/TR/xmlschema-2/> հասցեներով):

3. Փոխանցվող տվյալների առաջարկվող կառուցվածքը ներկայացված է աղյուսակում:

4. Աղյուսակում ձեւավորվում են հետեւյալ դաշտերը (վանդակները)՝

«տարրի անվանումը»՝ տարրի հերթական համարը, նույնականացուցիչը եւ ընդունված կամ պաշտոնական բառային նշագիրը,

«տարրի նկարագրությունը»՝ տարրի իմաստը (իմաստաբանական նշանակությունը) պարզաբանող տեքստ,

«ծանոթագրություն»՝ տարրի նշանակությունը հստակեցնող, դրա կազմման (լրացման) կանոնները սահմանող տեքստ կամ տարրի հնարավոր իմաստների բառային նկարագրություն,

«բազմ.»՝ տարրերի բազմաքանակություն (տարրի պարտադիր (կամ ընտրական) լինելը եւ հնարավոր կրկնությունների քանակը):

5. Փոխանցվող տվյալների տարրերի բազմաքանակությունը նշելու համար

օգտագործվում են հետևյալ նշումները՝

1՝ տարրը պարտադիր է, կրկնություններ չեն թույլատրվում.

n՝ տարրը պարտադիր է, պետք է կրկնվի n անգամ ($n > 1$).

1..*՝ տարրը պարտադիր է, կարող է կրկնվել առանց սահմանափակումների.

n..*՝ տարրը պարտադիր է, պետք է կրկնվի ոչ պակաս, քան n անգամ ($n > 1$).

n..m՝ տարրը պարտադիր է, պետք է կրկնվի ոչ պակաս, քան n անգամ, եւ ոչ ավելի, քան m անգամ ($n > 1, m > n$).

0..1՝ տարրը կամընտրական է, կրկնություններ չեն թույլատրվում.

0..*՝ տարրը կամընտրական է, կարող է կրկնվել առանց սահմանափակումների.

0..m՝ տարրը կամընտրական է, կարող է կրկնվել ոչ ավելի, քան m անգամ ($m > 1$):

Աղյուսակ

Փոխանցվող տվյալների կառուցվածքը

Տարրի անվանումը	Տարրի նկարագրությունը	Ծանոթագրություն	Բազմ.
1. Ռեեստրում անդամ պետության մարմնի (կազմակերպության) գրանցման համարը (գրանցման մասին փաստաթղթի համարը)	հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստումը եւ իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին դրանց իրացումն իրականացնող կազմակերպությունների ռեեստրում անդամ պետության մարմնի (կազմակերպության) գրանցման համարը (գրանցման մասին փաստաթղթի համարը)	տարրը նախատեսված է հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստումը եւ իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին դրանց իրացումն իրականացնող կազմակերպությունների ռեեստրում անդամ պետության մարմնի (կազմակերպության) գրանցման համարը (գրանցման մասին փաստաթղթի համարը) նշելու համար	1
2. Տեղեկությունները կազմելու ամսաթիվը եւ ժամանակը	տեղեկությունները կազմելու ամսաթիվը եւ ժամանակը	տարրը նախատեսված է տեղեկությունները կազմելու ամսաթիվը եւ ժամանակը նշելու համար	0..1
3. Հարկ վճարողի համարը (ներառված է «Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մասին տեղեկություններ» տարրի կազմում)	հարկ վճարողի՝ հսկիչ (նույնականացման) նշանի պատվիրատու հանդիսացող կազմակերպության համարը (հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում ներառված ապրանքների շրջանառությունն իրականացնող՝ անդամ պետությունների իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մասին տեղեկությունների կազմում)	տարրը նախատեսված է հարկ վճարողի համարը նշելու համար (Հայաստանի Հանրապետության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, Բելառուսի Հանրապետության դեպքում՝ վճարողի հաշվառման համարը, Ղազախստանի Հանրապետության դեպքում՝ անհատական նույնականացման համարը եւ քիզնես-նույնականացման համարը, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության դեպքում՝ հարկ վճարողի նույնականացման համարը), հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում ներառված ապրանքների շրջանառությունն	1

Տարրի անվանումը	Տարրի նկարագրությունը	Ծանոթագրություն	Բազմ.
		<p>իրականացնող եւ այդպիսի նշանների պատրաստման պատվիրատու-կազմակերպություն հանդիսացող՝ անդամ պետությունների իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար: Տարրը փոխանցվում է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերին անդամ պետության՝ հսկիչ (նույնականացման) նշանների իրացումն իրականացնող մարմնի (կազմակերպության) կողմից:</p>	
4. Բրացված հսկիչ (նույնականացման) նշանների քանակը	իրացված հսկիչ (նույնականացման) նշանների ընդհանուր քանակը	տարրը նախատեսված է այն իրացված հսկիչ (նույնականացման) նշանների ընդհանուր քանակը նշելու համար, որոնց մասին տեղեկությունները փոխանցվում են դրանց անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմիններին	0..1
5. Պատրաստված եւ իրացված հսկիչ (նույնականացման) նշանները	պատրաստված եւ իրացված հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկություններ	տարրը նախատեսված է պատրաստված եւ իրացված հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկություններ նշելու համար	1..*
5.1. Ապրանքը շրջանառության մեջ դնելու եղանակը	ապրանքը շրջանառության մեջ դնելու ծածկագրային նշագրերը	<p>հնարավոր նշանակությունները՝</p> <p>1՝ ներմուծում Միության մաքսային տարածք.</p> <p>2՝ արտադրություն անդամ պետությունների տարածքներում</p>	1
5.2. Ապրանքի քառանիշ ծածկագիրն՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի	ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի այն ապրանքի քառանիշ ծածկագիրը՝ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների	տարրը նախատեսված է ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի այն ապրանքի քառանիշ ծածկագիրը նշելու համար՝ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկին	1

Տարրի անվանումը	Տարրի նկարագրությունը	Ծանոթագրություն	Բազմ.
	ցանկին համապատասխան, որի համար օգտագործվելու են հսկիչ (նույնականացման) նշանները	համապատասխան, որի համար օգտագործվելու են հսկիչ (նույնականացման) նշանները	
5.3 Ապրանքի դրոշմավորման համար նախատեսված հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկություններ	ապրանքի դրոշմավորման համար նախատեսված հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկություններ	տարրը նախատեսված է ապրանքի դրոշմավորման համար նախատեսված հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկություններ նշելու համար	1
5.3.1. Հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստման ամսաթիվը	հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստման ամսաթիվը	տարրը նախատեսված է հսկիչ (նույնականացման) նշանների պատրաստման ամսաթվի մասին տեղեկություններ նշելու համար	1
5.3.2. Հսկիչ (նույնականացման) նշաններն իրացնելու ամսաթիվը	հսկիչ (նույնականացման) նշանների պատվիրատու հանդիսացող կազմակերպությանը հսկիչ (նույնականացման) նշաններն իրացնելու ամսաթիվը	տարրը նախատեսված է պատվիրատու հանդիսացող կազմակերպությանը հսկիչ (նույնականացման) նշաններն իրացնելու ամսաթվի մասին տեղեկություններ նշելու համար	1
		Տարրը փոխանցվում է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերին անդամ պետության հսկիչ (նույնականացման) նշանների իրացումն իրականացնող մարմնի (կազմակերպության) կողմից	
5.3.3. Հսկիչ (նույնականացման) նշանների բնութագրերը	հսկիչ (նույնականացման) նշանների բնութագրերի մասին տեղեկություններ՝ ստորեւ ներկայացված կառուցվածքին համապատասխան	տարրը նախատեսված է հսկիչ (նույնականացման) նշանների բնութագրերի մասին տեղեկություններ նշելու համար	1..*
5.3.3.1. Հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացուցիչը	հսկիչ (նույնականացման) նշանի տեսողականորեն պատկերվող նույնականացուցիչը	ձեւանմուշ՝ [A-Z] {2} [-] {1} [A-Z0-9] {6} [-] {1} [A-Z0-9] {10}	1

Տարրի անվանումը	Տարրի նկարագրությունը	Ծանոթագրություն	Բազմ.
5.3.3.2. Հսկիչ (նույնականացման) նշանի ռադիոհաճախականության պիտակի չիփի նույնականացուցիչը	հսկիչ (նույնականացման) նշանի ռադիոհաճախականության պիտակի չիփ եզակի նույնականացուցիչը (ռադիոհաճախականության պիտակի TID համարը) հաշվարկման տասնվեցական համակարգում		1

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի
նոյեմբերի 23-ի թիվ 70 որոշմամբ

ՊԱՀԱՆՁՆԵՐ

**այն տեղեկատվության կառուցվածքին եւ ձեւաչափին ներկայացվող,
որը հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա
ապրանքների ցանկում ներառված ապրանքների շրջանառությունն
իրականացնող իրավաբանական անձանց եւ անհատ
ձեռնարկատերերի կողմից փոխանցվում է դրանց անդամ
պետությունների իրավասու (լիազորված) մարմիններին, ինչպես
նաեւ այդ տեղեկատվության փոխանցման ժամկետները**

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն պահանջները մշակվել են «Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման ներմուծման փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետին համապատասխան:

Սույն պահանջներում կիրառվող հասկացությունները գործածվում են նշված Համաձայնագրով եւ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկություններն ազգային

բաղադրիչ փոխանցելիս ցանկում ներառված ապրանքների շրջանառությունն իրականացնող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը պատասխանատվություն են կրում հսկիչ (նույնականացման) նշաններում պարունակվող տեղեկությունների հավաստիության համար՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

II. Տեղեկատվության կառուցվածքը

1. Հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում ներառված ապրանքների՝ Միության մաքսային տարածք ներմուծման կամ դրանց արտադրության ժամանակ փոխանցվող՝ հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկատվություն:

2. Հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում ներառված ապրանքների արտադրությունը եւ (կամ) դրանց՝ Միության մաքսային տարածք ներմուծումն իրականացնող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերն ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչի միջոցով անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին են փոխանցում հետեւյալ պարտադիր տեղեկատվությունը՝

ա) հարկ վճարողի՝ հսկիչ (նույնականացման) նշանի պատվիրատու հանդիսացող կազմակերպության համարը (Հայաստանի Հանրապետության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, Բելառուսի Հանրապետության դեպքում՝ վճարողի հաշվառման համարը, Ղազախստանի Հանրապետության դեպքում՝ անհատական նույնականացման համարը եւ բիզնես-նույնականացման համարը, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության դեպքում՝ հարկ վճարողի նույնականացման համարը)։

բ) ապրանքի տասանիչ ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային

անվանացանկին համապատասխան.

գ) ապրանքների մասին հայտարարագրի գրանցման համարը (ներմուծող կազմակերպությունների համար).

դ) հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացուցիչը.

ե) առևտրային միավորի գլոբալ նույնականացման համարը (Global Trade Item Number) (այսուհետ՝ GTIN).

զ) հսկիչ (նույնականացման) նշանի ռադիոհաճախականության պիտակի չիփի նույնականացուցիչը (Tag Identifier) (այսուհետ՝ TID).

է) առևտրային միավորի սերիական գլոբալ համարը (Serialized Global Trade Item Number) (այսուհետ՝ SGTIN):

3. Անդամ պետությունների ազգային բաղադրիչների կազմում պետք է նախատեսված լինի հսկողության ենթակա ապրանքների մասին հավաստի տվյալների հաշվառումը եւ պահպանումն ապահովող տեղեկատվական ռեսուրսի ձեւավորում: Տվյալ ռեսուրսը պետք է իրագործվի GS1 կազմակերպության (Ավտոմատ նույնականացման համաշխարհային ասոցիացիայի) ազգային (տարածաշրջանային) ծառայությունների փոխգործակցության հիման վրա կամ ապրանքային անվանացանկի եւ ապրանքների նկարագրության գծով կենտրոնացված ազգային ռեսուրսի ստեղծման միջոցով: Ապրանքների արտադրությունը եւ (կամ) Միության մաքսային տարածք դրանց ներմուծումն իրականացնող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը նշված տեղեկատվական ռեսուրս են փոխանցում հետեւյալ պարտադիր տեղեկատվությունը՝

ա) ապրանքի անվանումը.

բ) ապրանքի որակին ներկայացվող պահանջները սահմանող նորմատիվ փաստաթղթերի մատնանշումը (այդպիսի նորմատիվ փաստաթղթերով բաց թողնվող ապրանքների համար).

գ) ապրանքն արտադրողի անվանումը (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը), GLN-ը (առկայության դեպքում).

դ) ապրանքի տարատեսակը (այն նյութի անվանումը, որից պատրաստված է ապրանքը, եւ ապրանքի այլ տարբերակիչ հատկանիշներ (գույնը, չափը, մոդելը եւ այլն)).

ե) ապրանքի պատկերը (այն դեպքում, երբ այդպիսի տեղեկատվության փոխանցումը սահմանված է անդամ պետությունների օրենսդրությամբ).

զ) ապրանքի ծագման երկիրը.

է) ապրանքի քանակի չափման միավորը:

4. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել ապրանքների արտադրությունը կամ Միության մաքսային տարածք դրանց ներմուծումն իրականացնող իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչ (այսուհետ՝ ազգային բաղադրիչ) փոխանցվող լրացուցիչ տեղեկատվության ցանկ: Նշված լրացուցիչ տեղեկատվությունը չի կարող օգտագործվել անդրսահմանային առևտրում:

2. Անդրսահմանային առևտրի շրջանակներում ձեռքբերված ապրանքի վրա զետեղված հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ տեղեկատվությունը

5. Միության տարածքում անդրսահմանային առևտրի շրջանակներում ապրանքներ ձեռք բերելուց հետո անդամ պետությունների իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերն ապրանքի վրա զետեղված հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին, որի տարածքում իրենք գրանցված են՝ ազգային բաղադրիչ փոխանցելով տեղեկություններ, որոնք պարունակում են անդրսահմանային առևտրի շրջանակներում ձեռք բերված ապրանքի

յուրաքանչյուր միավորի վերաբերյալ հետեւյալ պարտադիր տեղեկատվությունը՝

ա) հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացուցիչը եւ (կամ) TID-ը եւ (կամ) SGTIN-ը.

բ) անդրսահմանային առետրի շրջանակներում ապրանքը ձեռք բերած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող հարկ վճարողի համարը.

գ) արտահանման երկրի համարը:

3. Ապրանքների մնացորդների դրոշմավորման ժամանակ
հսկիչ (նույնականացման) նշանների օգտագործման մասին
տեղեկատվությունը

6. Այն դեպքում, երբ ապրանքները ներառվում են հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում (այսուհետ՝ ցանկ), այդպիսի ապրանքներով մեծածախ եւ (կամ) մանրածախ առետուր իրականացնող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորում են այդ ապրանքների մնացորդները եւ էլեկտրոնային եղանակով հսկիչ (նույնականացման) նշանների օգտագործման մասին տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմնին, որի տարածքում իրենք գրանցված են: Այդպիսի տեղեկատվություն տրամադրելու ժամկետները սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում գրանցված են տվյալ իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը: Ազգային բաղադրիչ են փոխանցվում այն տեղեկությունները, որոնք պարունակում են մնացորդների թվից ապրանքի յուրաքանչյուր միավորի վերաբերյալ հետեւյալ տեղեկատվությունը (բացառությամբ կոմիսիոն առետրի ժամանակ ապրանքների մնացորդների)՝

ա) հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացուցիչը եւ (կամ) TID-ը եւ (կամ) SGTIN-ը.

բ) հսկիչ (նույնականացման) նշանի պատվիրատու հանդիսացող հարկ վճարողի համարը.

գ) ապրանքի անվանումը.

դ) ապրանքի որակին ներկայացվող պահանջները սահմանող նորմատիվ փաստաթղթերի մատնանշումը (այդպիսի նորմատիվ փաստաթղթերով բաց թողնվող ապրանքի համար).

ե) ապրանքն արտադրողի անվանումը (իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը), GLN-ը (առկայության դեպքում).

զ) ապրանքի տարատեսակը (այն նյութի անվանումը, որից պատրաստված է ապրանքը, եւ ապրանքի այլ տարբերակիչ հատկանիշներ (գույնը, չափը, մոդելը եւ այլն)).

է) արտադրող երկրի անվանումը.

ը) ապրանքները շրջանառության մեջ դնելու եղանակը.

թ) ներմուծող ընկերությունների համար՝ ապրանքների մասին այն հայտարարագրի գրանցման համարը, որին համապատասխան ապրանքը դրվել է շրջանառության մեջ.

ժ) GTIN-ը:

4. Ապրանքների կոմիսիոն առետրի ժամանակ հսկիչ

(նույնականացման) նշանների օգտագործման մասին

տեղեկատվությունը

7. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ կնքված կոմիսիայի պայմանագրերի հիման վրա ապրանքների կոմիսիոն վաճառքի ժամանակ այդպիսի առետուր իրականացնող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերն այդ ապրանքները վաճառքի համար առաջարկելու պահից ոչ ուշ դրոշմավորում են այդ ապրանքները հսկիչ (նույնականացման)

նշաններով եւ հսկիչ (նույնականացման) նշանների օգտագործման մասին տեղեկացնում են այն անդամ պետության իրավասու (լիազորված) մարմինն, որի տարածքում իրենք գրանցված են: Ապրանքների կոմիսիոն առևտրի ժամանակ հսկիչ (նույնականացման) նշանների օգտագործման մասին տեղեկացնելիս ապրանքի յուրաքանչյուր միավորի վերաբերյալ փոխանցվում է հետևյալ պարտադիր տեղեկատվությունը (այդ թվում՝ կոմիսիոն առևտրի ժամանակ ապրանքների մնացորդների վերաբերյալ՝

ա) հսկիչ (նույնականացման) նշանի նույնականացուցիչը եւ (կամ) TID-ը եւ (կամ) SGTIN-ը.

բ) կոմիսիոն վաճառքն իրականացնող՝ հսկիչ (նույնականացման) նշանի պատվիրատու հանդիսացող հարկ վճարողի համարը:

5. Գնորդների կողմից վերադարձված ապրանքների համար հսկիչ
(նույնականացման) նշանների օգտագործման մասին
տեղեկատվությունը

8. Այն դեպքում, երբ անդամ պետությունների օրենսդրության մեջ սահմանված են մանրածախ առևտրի շրջանակներում իրացված ապրանքների վրա զետեղված հսկիչ (նույնականացման) նշանների մասին տեղեկացմանը ներկայացվող պահանջներ, եւ ապրանքը վերադարձվել է պատշաճ որակի ապրանքի վերադարձի (փոխանակման) համար անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված ժամկետում, եւ պահպանված է հսկիչ նշանի ամբողջականությունը, ապա ապրանքը չի վերադրոշմավորվում, եւ տեղեկատվական համակարգ է փոխանցվում հետևյալ տեղեկատվությունը՝

